ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 80 20 .04. 2020թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Ղուկասյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ավագանու N08, N09 և N10 որոշումները:
Առդիր 3. էջ:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաճոր համայնք, գ. Քարաճոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» ապրիլի 2020թ. N 08

ՔԱՐԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին հավանություն տվեց 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդմանը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ս.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Հ.Ռոստոմյան

2020թ. ապրիլի 15
գ. Քարաճոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2020թ. ,N 09

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7–րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ09-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալական անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները.

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ս.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Հ.Ռոստոմյան

2020թ. ապրիլի 15
գ. Քարաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» ապրիլի 2020թ. N 10

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ հոդվածի 3-րդ կետով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04. 2001թ. թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է .

1. Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ 06-109-0117-0005 ծածկագրով 0.195 հա, գյուղատնտեսական նշանակության վարելահողը, մեկնարկային գինը 266000ՀՀ դրամ, 06-109-0117-0006 ծածկագրով 2.09289 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը, մեկնարկային գինը 2836000 ՀՀ դրամ, 06-109-0114-0014 ծածկագրով 1.42717 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը, մեկնարկային գինը 1994000 ՀՀ դրամ աճուրդ վաճառքով օտարելուն:
2. Աճուրդի մասնակցության վճարը 2000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդով վաճառվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Կարապետյան Արսեն Ս.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ռոստոմյան